



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 10 >> *Մաթևոսյան* 2019թ.
ք. Արմավիր

N *109/53-2019*

ՍՈՆՅԱ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 8-րդ, 10-րդ, 21-րդ և, հիմք ընդունելով Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 19-ի N 42/44.2/18311-2019 գրությունը, <<Մրցույթի հարցազրույցի փուլը վարելու համար հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ>> ծրագրով երևանի պետական համալսարանի կողմից անցկացվող վերապատրաստմանը մասնակցելու նպատակով:

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Սոնյա Բուդաղյանին 2019 թվականի մայիսի 13-ից 14-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան:
2. Սոնյա Բուդաղյանի վերապատրաստման մեջ գտնվելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Արմեն Թովմասյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X S. Budagyan

VERIFIED OCSP 5/10/2019 16:27:30 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230